ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՕԹՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(18 ԱՊՐԻԼ 1999)

«ՆՈՐՈԳՈՂ ՀՆՈՒԹԵԱՆՑ, ՆՈՐՈԳԵԱ՛ ԵՒ ՁԻՍ, ՆՈՐՈԳ ՁԱՐԴԱՐԵԱ»

Այս պահը յուզախառն ապրումներու մի բացառիկ պահ է ինձ համար: Սա պահին, աչքերիս կողմից համընդգրկումը այս քարերին, ձեռքերիս հպումը սա վէմերին, տարբեր երանգ կու տան պատմութեան, եկեղեցուն, հայրենիքին եւ մշակոյթին իմ հասկացողութեան եւ ընկալման: Քարերը սա բլուրների վրայ դիզուած, տարտղնուած, երբեմն ժայռացած ուրիշ քան են, քան ինչ որ քարն է: Նորավանքի եկեղեցին վանական, յուշախօսային այս համոյթը կենդանի քարերի մի համերգ է ունկնդրել գիտցող հաւատացեալին եւ սրբութիւնից այցելող ուխտաւորին համար: Կենդանի քարեր են սրանք, ըստ Աստուածաշունչ մատեանի խօսքին (Ա. Պետր. Բ. 5): Նրանք ունին իրենց յատուկ լեզուն, որ անջնջելի է, որովհետեւ իր մէջէն կը խօսին հաւատքը, սէրը, Աստուծոյ անստուեր ներկայութիւնը, աղօթքին մրմունջը, շարականի մեղեդին, մոմի իւղը, խունկին բոյրը, արեւին շողը, քրտինքին հոտը, նոյնիսկ երբեմն արեան գիծն ու գոյնը:

Այդ բոլորը սակայն անմիջական հաղորդութենէ զուրկ էին, որովհետեւ աչքի տեսք էին մագաղաթ գիրքի մէջ, լուսանկար, «անանձնական» մի գոյութիւն, որ կը «խօսէր» մեզի առանց բարբառելու: Կը խօսէր պատմութեան էջերէն, կը խօսէր իշխաններու սաղաւարտներէն եւ սուրերէն, աղեղներէն եւ նիզակներէն, կը խօսէր վարպետ քարտաշներու մուրճի հարուածներու կշռութաւոր եւ հոգիէն ճառագայթող ապրումներու իմաստաշեշտ ընթացքէն, կը խօսէր «գրիչ»ներու, «ծաղկող»ներու, «ոսկող»ներու վրձինսիսար մեղմ հպումներէն մագաղաթներու վրայ տժգոյն: Կը խօսէր նոյնիսկ եւ վերջերս մանաւանդ աւերակներու բեկբեկեալ լեզուով, եւ սակայն թելադրական անօրինակ զօրութեամբ:

Այսօր ան կը թողու աւերակներու այդ լեզուն եւ կը խօսի իր հարազատ եւ ամբողջական լեզուով: Միջին դարերու մեր մշակութային ժառանգութեան ամենէն նշանակալից այս շրջանը Որբելեան մեծ աւատապետական իշխանութեան քաջալերանքին տակ եւ Սիւնեաց մետրոպոլիտական Աթոռի անմիջական հոգածութեան ներքեւ վստահաբար առաւել խոր հասկացողութեան պիտի բարձրանայ Նորավանքի այս գեղատեսիլ վանական համալիրի նորազարդ պայծառացեալ տեսքովը, որ ինքնին ներշնչման աղբիւր է ռեւէ պարզ դիտողի համար այս լեռնալանջի տարածութեանը մէջ:

Սա այլեւս յուշարձան չէ, սա հաւատքի եւ մշակոյթի օճախ է: Սա ճարտա-

ռապետական եւ քանդակագործական կոթող չէ. սա դպրոցէ (մի շքոլա. ինչպէս այնքան կը սիրէր ըսել Խաղբակեանց. Պռոշեանց. Օրբելեանց եւ աւատապետական այլ մեծ գերդաստաններու պատմութեան հմուտ մասնագէտ Գարեգին Կթղ. Յովսէփեանց). ուր պիտի գան սերունդներ այստեղ գտնելու համար աղբիւրը հաւատքի. գեղեցկութեան եւ հոգեւոր ու մտաւոր ճառագայթումի: Սա այլեւս սոսկ անցեալի յուշարար չէ. այլ ապրող. շնչող ուխտատեղի. ուր մեր ժողովուրդի զաւակները պիտի գան յաճախակի հերթականութեամբ. դպրոցականներ. համալսարանականներ. որպէսզի քարեղէն գիրքերու մէջէն հոգեղէն ճշմարտութեան արժէքները քաղեն. միախառնեն իրենց հոգեբանութեան եւ գիտութեան մէջ եւ դառնան Նորավանքի նոր «հաւատացեալ»ները:

Այսօրուան օծումը մի նոր անկիւնադարձ կը բանայ Նորավանքի դարագնաց պատմութեան մէջ. այնպիսի անկիւնադարձ. որ հինին կ'ըսէ. «Դու հնացեալ չես», եւ նորոգեալին. բարեգարդեալին կ'ըսէ. «դու ծաղկազարդի մի նոր դրուագ ես. կուգաս Յիսուսի նման եւ սրբութիւն կը ցանես այս լեռնալանջերուն»:

Բնականօրէն Նորավանքի հիմնական վերականգնումը իր սկզբնային պատկերին մէջ՝ արդիւնք է ամենէն առաջ մեր պետական հոգածութեան. յատկապէս այն գիտնականներու. որոնք տարիներ շարունակ յոգնաջան աշխատանքով կատարեցին հարկ եղած ուսումնասիրական. հետազօտական աշխատանքներ. որպէսզի մնայ հարազատ եւ անփոփոխ՝ հայ հոգու այս շքեղաձայն եւ «անլռելի զանգակատունը»: Բոլորին կը յայտնենք Մեր հայրական ամենաջերմ սէրը եւ Հայրապետական բարձրագոյն գնահատանքը:

Հայց. Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի ծրագրերու շարքին մէջ յատուկ տեղ եւ նշանակութիւն ունի այս եկեղեցական վանական համալիրին վերաշինութիւնը: Դալար եւ ուժեղ մնան օրհնեալ ձեռքերը մեր քարտաշներուն. տաղանդաւոր ճարտարապետներուն եւ քանդակողներուն:

Մեր գնահատանքի խօսքը 1700-ամեակի Գործադիր Յանձնախումբին եւ անոր նուիրեալ աշխատողներուն. որոնք ամէն ինչ ի գործ դրին առանց դադարի եւ գործը ի գլուխ հանեցին:

Վերջապէս Մեր հայրական սիրոյ ջերմագին խօսքը Մոնթրէալի (Գանատա) մեր անձնուէր եւ եկեղեցասէր բարեկամներուն՝ Տէր եւ Տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէթեաններուն. որոնց նիւթական զոհողութեան գեղեցիկ պտուղն է. որ կը վայելենք այս օրերուն. եւ յատկապէս այս կիրակի. որ մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ համար «Կանաչ Կիրակի» կը կոչուի փոխաբերականօրէն այնքան ներշնչողական իմաստով: Թող Աստուած արեւու լոյսին պէս երջանկութիւն ցանէ իրենց կեանքին մէջ:

Թող Նորավանքը քարմօրէն միտռնեալ. նոր շունչ. նոր հաւատք. նոր տեսիլք ցանէ ձեր եւ գալիք ուխտատորներու կեանքերուն մէջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ